Հովհաննես Թումանյան

Բզեզի դպրոցը

Վարպետ Բզեզն ամռան մի օր
Դըպրոց բացեց մեծ ծառի տակ
Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,
Մըժեղ, մըրջյուն, մըլակ, մոծակ...

Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,
Պիտի սովրեք, սովրեք անվերջ,
Որ իմանաք ինչ է ձեզ պետք,
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ:

Պիտի սովրեք, սովրեք էնքան,

Մինչև դառնաք ինձ պես վարպետ:
Դե նըստեցեք հիմի հանդարտ,
Ինչ որ կասեմ՝ կըրկնեք ինձ հետ:

Ա. Անթառամ, Բ. Բարձմենակ.
Գ. Գաղտիկուռ, Դ. Դըդում...

Է՛յ, դու մորե՛խ, դեսն ականջ դիր,
Ի՞նչ ես էդտեղ կըտըրտում:

Ե. Երիցուկ, Զ. Զանազան,
Է. Էշխըրտուկ, Ը. Ընկուզ...
Մի՛ աղմըկեք, հանաք հո չի՞.

Թիթե՛ռ, հանգի՛ստ, մոծակ, ստ՛ուս:

Մի՛ խառնըվեք, չեմ սիրում ես
Էդպես աղմուկ, աղաղակ:
Թ. Թըրթընջուկ, Ժ. Ժախ ու բոխ,
Ի. Իշառվույտ, Լ. Լեղակ:

Խ. Խընձորուկ, Ծ. Ծիրան,
Կ. Կըռոթուկ, Հ. Հաղարջ...
— Տե՛ս, վարժապետ, էս մըլակին,
Ինձ ասում է՝ սարի արջ:

Ա՛յ տղա, է՛յ, չեն հայհոյիլ:

Տըզզան հիմար անասուն...
Ձ. Ձըմերուկ, Ղ. Ղանձլամեր,
Ճ. Ճարճատուկ, Մ. Մասուր:

Դու, է՛յ ծըղրիդ, ո՞նց ես նըստել.
Գըլուխդ ետ, մեջքըդ դուրս:

Յ. Յունապի, Ն. Նունուֆար,
Շ. Շագանակ, Ո. Ողկույզ:

Վա՛յ, էս ինչե՛ր կան՝ դասերում.
Ողկույզը ես շատ եմ սիրում...
Իսկ ես կաղամբ կուտե՛մ, կուտե՛մ...

Իսկ ես՝ ծիրան... իսկ ես՝ կոտեմ...

Ձեզ չեն հարցնում՝ ի՛նչ կուտեք դուք
Քընաթաթախ՝ առտեհան:
Չ. Չինարի, Պ. Պատատուկ
Ջ. Ջրրկոտեմ, Ռ. Ռեհան:

Ս. Սերկևիլ, Վ. Վարդենի,
Տ. Տերեփուկ, Ց. Ցաքի...
Ո՛ւհ, մարդ քարից պիտի լինի,
Ձեր մեջ գրլուխ կրճաքի:

Փ. Փրրփրրրուկ. Ք. Քարասոխ,

Օ. Օֆ, պրրծանք վերջապես...
Դե գնացեք, վաղը կգաք
Անգիր արած ջրրի պես:

Ու հավաքած թիթեռ, ճանճ, բոռ,
Մրժեղ, մրրջյուն, մրլակ, մոծակ,

Վարպետ Բրզեզն՝ ամառն էսպես
Դաս էր տալիս մի ծառի տակ:

1911